ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-3-ԱՈ-2
2018թ.

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄ

ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ԱՅՆ ԵՐԿԱՄՅԱ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 18-րդ հոդվածի 1-ին, 94-րդ հոդվածի 3-րդ մասերի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Հավանություն տալ դատական իշխանության պաշտոնական կայքի նախնական կառուցվածքին և այն փորձնական գործարկել:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտին՝ երկամսյա ժամկետում ապահովել դատական իշխանության պաշտոնական կայքի փորձնական գործարկումը, վերհանել հնարավոր թերությունները և դատական իշխանության պաշտոնական կայքի կառուցվածքի վերջնական տարբերակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի հաստատմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2018թ. ապրիլի 16
ք. Երևան